

ՄԱՐԻԱՆՆԱ ՏԻԳՐԱՆՅԱՆ

Արվեստագիտության թեկնածու

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ

tigranyan.marianna@mail.ru

ORCID iD: 0009-0009-8960-4911

DOI: 10.54503/978-5-8080-1587-6-597

ՈՒՌԵՆՈՒ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆԻ ՊՈԵԶԻԱՅՈՒՄ ԵՎ ԴՐԱ ԱՐՏԱՅՈԼՈՒՄԸ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Քանալի քառեր - Ավ. Իսահակյան, ուոենի, Մ. Շահինյան, Ա. Բլոկ,
Ս. Ռախմանինով, Դ. Ղազարյան:

Ամփոփում

Ավ. Իսահակյանի պոեզիայում «ուոենին» կայուն պոետիկ կերպարներից է, որին բանաստեղծն անդրադարձել է ոչ մեկ անգամ՝ «*Ամեն գիշեր իմ պարտեզում*» (Ալեքսանդրապոլ, 1891 թ.), «*Ա՛խ ուոենի, վշտիս ընկեր*» (Էջմիածին, 1892 թ.): Ուոենու սիմվոլը շատ հին է և տարբեր ժողովուրդների դիցաբանական պատկերացումներում տարբեր նշանակություն է ունեցել՝ երբեմն նույնիսկ հակասական: Ինչպես Ավ. Իսահակյանի, այնպես էլ ռուս բանաստեղծների արվեստում «լացող ուոենին» խորհրդանշել է մենություն, կարոտ և թախիծ, սակայն առանցքային իմաստը՝ Հայրենիքից բաժանվելն ու Հայրենիքի ճակատագիրն է: «*Ամեն գիշեր իմ պարտեզում*» բանաստեղծության «իսահակյանական նյարդը» դիպուկ զգացել է Ա. Բլոկը, ում թարգմանությունն անչափ հուզել է անվանի կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովին: Վերջինս այն ընդգրկել է իր «Վեց ռոմանս» (Օր. 38) վոկալ շարքում, որն սկսվում է հենց Ավ. Իսահակյանի բանաստեղծությամբ («*Ночью в саду у меня*»): Վոկալ ստեղծագործություններում Ս. Ռախմանինովը գերադասել է ռուսական պոեզիան և միակ բացառությունը եղել է Ավ. Իսահակյանի բանաստեղծությունը, որի ընտրության հարցում կոմպոզիտորին օգնել է գրող և հրապարակախոս Մարիետա Շահինյանը: Այդ շարքը հայրենիքում գրված կոմպոզիտորի վերջին ստեղծագործությունն է (1916 թ.): Իր երրորդ «ուոենին»՝ «*Գեղակի վրա թեքվել է ուռին*», Ավ. Իսահակյանը գրել է տարագրության

մեջ՝ Շվեյցարիայի Ռոզենում, 1915 թ. սեպտեմբերի 25-ին: Այդ շրջանի ստեղծագործություններում անսպառ ցավով և ողբերգությամբ է դրսևորվել հայրենիքի թեման («Ուսլա Կարո»): Տարիներ անց, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանն այդ «Ուռենու» խոսքերով գրել է երգ, որն իսկույն սիրվել և տարածվել է ժողովրդի մեջ: Այն հաճախ հեռարձակվել է ռադիոյով և ընկերների վկայությամբ, նման պահերին Իսահակյանը կախարդված լսել է, նշելով, որ Դանիելը հասկացել է «Ուռենու» իրական էությունը:

МАРИАННА ТИГРАНЯН

Кандидат искусствоведения

Институт искусств НАН РА

tigranyan.marianna@mail.ru

ORCID iD: 0009-0009-8960-4911

СИМВОЛИКА ИВЫ В ПОЭЗИИ АВЕТИКА ИСААКЯНА И ЕЁ ВЫРАЖЕНИЕ В МУЗЫКЕ

Ключевые слова: А. Исаакян, ива, М. Шагинян, А. Блок, С. Рахманинов, Д. Казарян.

Аннотация

В поэзии А. Исаакяна «ива» является одним из устойчивых образов, к которому поэт обращался не раз: «*Ночью в саду у меня*» (Александрополь, 1891), «*О, ива, друг моей печали*» (Эчмиадзин, 1892). Символ ивы очень древний и в мифологических представлениях разных народов имел разные значения, порой даже противоречивые. В творчестве А. Исаакяна, как и в творчестве русских поэтов, «плакучая ива» символизировала одиночество, тоску и скорбь, но ключевое значение — разлука с Родиной и судьба Родины. «Исаакяновский нерв» стихотворения «Ночью в саду у меня» точно уловил А. Блок, перевод которого тронул С. Рахманинова. Он включил её в свой вокальный цикл «Шесть романсов» (соч. 38), который начинается стихотворением А. Исаакяна («Ночью в саду у меня»). В вокальном творчестве С. Рахманинов отдавал предпочтение русской поэзии, и единственным исключением стало стихотво-

рение А. Исаакяна, в подборе которого композитору помогала известная писательница и публицист Мариэтта Шагинян. Романс настолько полюбился, что его нежно стали называть «Ивушкай». Этот цикл — последнее произведение, написанное знаменитым композитором на родине (1916), ясно осознававшего весь драматизм эпохи и трагизм предстоящих событий. Свою третью «вербу» — «*Над рекой склонилась ива*», А. Исаакян написал будучи в эмиграции, в Розене (Швейцария) 25 сентября 1915 года — трагического года для армян. В произведениях того периода тема родины проявлялась с бесконечной болью и особым драматизмом («Уста Каро»). Спустя годы, композитор Даниел Казарян написал песню на слова «Ивы» (1929), которая сразу же полюбилась и стала популярной в народе. Её часто транслировали по радио и, по словам друзей, в такие минуты, Исаакян заворожённо слушал, отмечая, что Даниел понял истинную суть «Ивы».

MARIANNA TIGRANYAN

PhD in Arts

Institute of Arts of the NAS RA

tigranyan.marianna@mail.ru

ORCID iD: 0009-0009-8960-4911

THE IMAGE OF THE WILLOW IN THE POETRY OF AVETIK ISAHAKYAN AND ITS MUSICAL INTERPRETATION

Keywords: Avetik Isahakyan, willow, Marietta Shaginyan, Alexander Blok, Sergei Rachmaninoff, Daniel Kazaryan.

Abstract

In the poetry of Avetik Isahakyan, the willow is one of the poet's most consistent and symbolically charged images. He returns to it repeatedly in his works, including poems such as “*At Night in My Garden*” (Alexandropol, 1891), “*Oh, Willow, Friend of My Sorrow*” (Echmiadzin, 1892). The image of the willow is deeply rooted in ancient symbolism and appears in the mythologies of various cultures, often with contrasting meanings. In Isahakyan's oeuvre, as in the works of many Russian poets, the weeping

willow typically embodies themes of loneliness, melancholy, and grief. However, in his case, the willow also carries a profound connotation of separation from the homeland and a mournful reflection on the fate of the Armenian people. The emotional depth of Isahakyan's poem "*At Night in My Garden*" was keenly felt by Russian poet Alexander Blok, whose translation of the piece deeply moved composer Sergei Rachmaninoff. Rachmaninoff included this poem—unique as the only non-Russian text—in his vocal cycle "*Six Romances*" (Op. 38), composed in 1916. The selection was made with the assistance of Marietta Shaginyan, a renowned writer and publicist. The piece became so beloved by Rachmaninoff that it was often affectionately referred to simply as "*Willow*". As the final composition written by the composer on Russian soil, the cycle resonates with the drama and foreboding of the times, evoking a poignant farewell to both a personal and national past. Isahakyan's third prominent "willow" poem, "*A Willow Bent Over the River*", was written in exile in Rosen, Switzerland, on September 25, 1915—a year marked by profound tragedy for the Armenian people. This period of his literary production is imbued with deep sorrow and national pain, exemplified in works such as "*Usta Karo*". Decades later, Daniel Kazaryan, a noted Armenian composer, set Isahakyan's "*Willow*" to music. The song gained immediate popularity and was frequently broadcast on Armenian radio. According to contemporaries, Isahakyan listened to these broadcasts in a state of reverent silence, later noting that Kazaryan had truly grasped the essence of the willow and its symbolic significance.

Ներածություն

Ավետիք Իսահակյանն այն հեղինակներից է, որոնց բանաստեղծությունները, թերևս, ամենից շատն են վերածվել երգերի և մեծ ժողովրդականություն վայելել: Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների հիման վրա գրվել է ավելի քան 200 երաժշտական ստեղծագործություն (Թաշճյան, 2006: 1): Տակավին երիտասարդ բանաստեղծի սկզբնական փորձերն իսկույն արձագանք են գտել հայ երաժշտության մեջ: Առաջին երկրպագուներից էր Գևորգյան ճեմարանի աշակերտ Սողոմոն Սողոմոնյանը՝ ապագա Կոմիտաս վարդապետը, որը դեռևս իր ստեղծագործական գործունեության արշալույսին՝ 1892 թ.,

բազմաձայնեց Ավ. Իսահակյանի «Արևն իջավ սարի գլխուն» բանաստեղծությունը (Աթայան, 1975: 33):

Ավ. Իսահակյանի պոեզիայում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում ուռենու կերպարը, որին Վարպետն անդրադարձել է ոչ մեկ անգամ: Իսահակյանի «ուռենիները» ոգեշնչել են ինչպես հայ, այնպես էլ ռուս կոմպոզիտորներին (Ն. Գալանտերյան, Ա. Տեր-Ղևոնդյան, Ս. Բարխուդարյան, Հ. Ստեփանյան, Ա. Ոսկանյան, Լ. Չաուշյան, Ա. Տերտերյան, Ս. Ռախմանինով, Բ. Շնապեր, Ե. Յախնինա, Վ. Սոլովյով, Ռ. Բոյկո) (Թաշճյան, 2006: 19-21, 32-34) [ցանկը վերջում — Մ. Տ.]: Ստորև կանդրադառնանք միայն երկուսին՝ Ս. Ռախմանինովի և Դ. Ղազարյանի ռոմանսներին:

Ավ. Իսահակյան. «Ամեն գիշեր իմ պարտեզում»

1891 թվականը Իսահակյանի համար ճակատագրական տարի էր. վերադառնալով հայրենի Ալեքսանդրապոլ նա հյուրընկալվում է իր մորեղբոր որդիներին՝ Կարապետ և Հովհաննես Կոստանյաններին, որոնց տանը և հանդիպում է իր կյանքի մեծ սիրուն՝ Շուշանիկ Մատակյանին: Նա դարձավ բանաստեղծի գլխավոր մոտան: Հենց նրան է նվիրված «Ամեն գիշեր իմ պարտեզում» բանաստեղծությունը (անդրանիկ հրապարակումը՝ «Մուրճ», 1902: 49), որը հետագայում թարգմանեց անվանի ռուս բանաստեղծ Ա. Բլոկը:

Հայ պոեզիայի հանդեպ ռուս բանաստեղծների ունեցած մեծ հետաքրքրությունը պայմանավորված էր XX դ. սկզբին Ռուսաստանում հայ ժողովրդի մշակույթի և պատմության նկատմամբ մեծ հետաքրքրության աճով: Օսմանյան Թուրքիայի տարածքում տեղի ունեցած ողբերգական իրադարձությունները և 1915 թվականին հայ ժողովրդի Ցեղասպանությունն արտացոլվել են բազմաթիվ ռուս գրողների, բանաստեղծների, փիլիսոփաների և մտավորականների գեղարվեստական խոսքում (Վ. Բոյուսով, Ս. Գորոդեցկի, Կ. Բալմոնտ, Վ. Նեմիրովիչ-Ռանսենկո, Յ. Վեսելովսկի և շատ ուրիշներ): XIX դարավերջին – XX դարասկզբին հրատարակվեցին մի շարք ուսումնասիրություններ՝ նվիրված հայկական թեմային: Հայ և ռուս ազգային մշակույթների մերձեցման ընդհանուր գործընթացի մի մասն էր կազմում նաև բանաստեղծների թարգմանչական գործունեությունը:

Բավական է հիշել հայ ժողովրդի մեծ բարեկամ՝ Վալերի Բրյուսովին, որը 1915-ի հունիսին Մոսկվայի հայկական կոմիտեի առաջարկությամբ գլխավորեց «*Հայաստանի պոեզիան հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը*» անթոլոգիան կազմելու և խմբագրելու աշխատանքները, որի շնորհիվ ռուս ընթերցողը հնարավորություն ունեցավ ծանոթանալու հայ պոեզիայի մի ամբողջ հազարամյակի գոհարներին՝ Սբ. Գրիգոր Նարեկացուց մինչև Վահան Տերյան:

Հայտնի է, որ Ա. Բլոկն առանձնապես չի սիրել թարգմանություններ կատարել, սակայն անկեղծորեն տարվել է Իսահակյանի պոեզիայով և ձգտել այն հասանելի դարձնել ռուս ընթերցողին: Գրականագետ, քննադատ Ալեքսանդր Իզմայլովին նամակում Բլոկը գրում է. «Իսահակյանն առաջնակարգ է. գուցե ամբողջ Եվրոպայում հիմա նման պայծառ ու ինքնաբուխ տաղանդ չկա» (Оганян, 1973: 138): Ա. Իսահակյանի պոեզիայի վերաբերյալ Վ.Բրյուսովի բարձր գնահատականին կարելի է ծանոթանալ նշված անթոլոգիայի նախաբանում. «Իսահակյանի բանաստեղծությունների գեղատեսիլ բազմազանության մեջ ապրում է իսկական մեծ պոեզիայի հոգին: Նրա արվեստի հիմքում՝ Հայաստանի անցյալի, ներկայի և ապագայի մասին երգն է: Իսահակյանի բոլոր բանաստեղծություններն ունեն մեղմ, տաք լույս, դրանք ներծծված են այդ լույսով, նրա տխրությունը լուսավոր է, ինչպես կասեր Պուշկինը՝ նրա բանաստեղծական նկարների աշխարհը պայծառ է, ուր արևը երբեք մայր չի մտնում... Ցավն ու զայրույթը նրա համար երբեք խավարի և չարության չեն վերածվել: Նրա արվեստում խոսում է երկրի և բնության հավերժական երիտասարդությունը, ինչն ստեղծել է այն եզակի երևույթը, որն անվանում ենք մեր Հայաստան» («Поэзия Армении...», 1916: 4):

Թարգմանչական աշխատանքներում Ա. Բլոկին մեծապես օժանդակել է հայ գրականագետ, թարգմանիչ, պետական-քաղաքական գործիչ, հրապարակախոս Պողոս Մակինցյանը: Ա. Բլոկին հասցեագրված նամակներից մեկում նա գրել է. «Իսահակյանն իմ մտերիմ ընկերն ու սիրելի բանաստեղծն է.... Իմ կարծիքով, Իսահակյանը ռուս ընթերցողի համար կենդանացավ Ձեր շնորհիվ, որի համար ուրախ կլինեմ սեղմել Ձեր ձեռքը, երբ լինեմ Սանկտ Պետերբուրգում»

(Мкртчян, 1963: 8): Ուսումնասիրելով Ավ. Իսահակյանի «Երգեր ու վերքեր» (1897) ժողովածուն (26 բանաստեղծություն)՝ Բլոկը կարողացել է ըմբռնել Իսահակյանի պոեզիային բնորոշ խզումն ու լարվածությունը՝ ձգտելով պահպանել ոչ միայն «իսահակյանական ոգին», այլև Վարպետի հայերեն խոսքի տառադարձությունն ու բառի հնչողությունը՝ *ֆոնեման*:

Ավ.Իսահակյան և Ս. Ռախմանինով

Ա. Բլոկի թարգմանությունների շնորհիվ ռուս ընթերցողը հնարավորություն ունեցավ ծանոթանալու հայ մեծ բանաստեղծի արվեստին, որոնց թվում էր նաև անվանի ռուս կոմպոզիտոր Սերգեյ Ռախմանինովը: Հարկ է նշել, որ իր վոկալ ստեղծագործությունների համար Ռախմանինովը նախընտրում էր ոսկեդարի բանաստեղծներին (Ա. Պուշկին, Մ. Լերմոնտով, Ֆ. Տյուտչև ևն) և առանձնապես մեծ երկրպագու չէր ժամանակակից սիմվոլիստ պոետների արվեստի (Վ. Բրյուսով, Ա. Բլոկ, Կ. Բալմոնտ, Ա. Բելի): Կոմպոզիտորի համար դժվար ընդունելի էին նաև թարգմանությունները, քանզի նա համարում էր, որ օտարազգի պոեզիան չի կարող փոխանցել սեփական վոկալ արվեստի ազգային էությունը՝ հնարավոր բոլոր երանգներով, ինչը ներշնչված և ներծծված է ռուսական ժողովրդական երաժշտության, ինչպես և հոգևոր ուղղափառ և ազգային ավանդույթի մշակութային տարրերով:

Ավ. Իսահակյանի պոեզիային Ռախմանինովը ծանոթացել է շնորհիվ բանասեր, հրապարակախոս, թարգմանիչ Մարիետա Շահինյանի, որն տարիներին մտերիմ էր կոմպոզիտորի հետ: Մ. Շահինյանին հասցեագրված նամակներից, որտեղ Ս. Ռախմանինովը նրան քնննչորեն դիմում է «*Ռե*» կեղծանունով [ինչպես նոտայի — Մ. Տ.], կարելի է ծանոթանալ երկու մտավորականների՝ արվեստի հարցերին և տեղի ունեցող մշակութային իրադարձություններին առնչվող կարծիքներին ու մտքերին: 1912 թ. մարտի 15-ի նամակում Ռախմանինովը դիմում է Շահինյանին խնդրանքով՝ իր նոր վոկալ շարքի համար ընտրել «թախծոտ» [բնութագրումը կոմպոզիտորին է — Մ. Տ.] բանաստեղծություններ (Апетян, 1961: 132): Սիմվոլիստներ՝ Ա. Բելիի, Ի. Սևերյանինի, Վ. Բրյուսովի, Ֆ. Սոլոգուբի և իհարկե Ավ. Իսահակյա-

նի ստեղծագործությունները, որոնք հիմք դարձան կոմպոզիտորի հայրենիքում գրված վերջին վոկալ շարքի համար. «*Ночью в саду у меня*» (А. Исаакян - А. Блок), «*К ней*» (А. Белый), «*Маргаритки*» (И. Северянин), «*Крысолов*» (В. Брюсов), «*Сон*» (Ф. Сологуб), «*Ау*» (К. Бальмонт), Ս. Ռախմանինովն ընտրել է հենց Մ. Շահինյանի խորհրդով:

Շարքն (Օր. 38) սկսվում է Իսահակյանի «Ուտենի» ռոմանսով, որը կոմպոզիտորը գրել է 1916 թ. սեպտեմբերի 12-ին: Ս. Ռախմանինովի արվեստում այն օտարազգի պոեզիայի եզակի օրինակն է, ինչը խոսուն փաստ է: Ա. Բլոկն ու Ս. Ռախմանինովը կարողացել են ճիշտ ըմբռնել և փոխանցել իսահակյանական «նյարդը»: Ինչպես նշել է կոմպոզիտորը, վոկալ շարքի վեց ռոմանսներից ամենահեշտը նրան տրվել է Իսահակյանի «Ивушка»-ն: Այդպես է կոմպոզիտորը քնքնշորեն անվանել «Ամեն գիշեր իմ պարտեզում» («Ночью в саду у меня») ռոմանսը, որը Սերգեյ Վասիլևիչի սիրված տեքստերից էր. «Այս հայ բանաստեղծը բնության զարմանալի երաժշտական զգացողություն ունի: Եթե բոլորը բնության մասին այսպես չափածո գրեն, ինչպես նա, ապա մենք՝ երաժիշտներս, պարզապես պետք է դիպչենք տեքստին, և երգը պատրաստ է» (Апетян, 1961: 169):

<i>Ամեն գիշեր իմ պարտեզում</i>	<i>Ночью в саду у меня</i>
<i>Լալկան ուռին, հեզ ուռին</i>	<i>Плачет плакучая ива,</i>
<i>Վշտապոչոր լաց է լինում,</i>	<i>И безутешна она,</i>
<i>Լաց է լինում իմ ուռին:</i>	<i>Ивушка, грустная ива.</i>

<i>Եվ սրբորում է առավոտը</i>	<i>Раннее утро блеснёт,</i>
<i>կոյս արևը նազելի</i>	<i>Нежная девушка зорька</i>
<i>Հուր ծամերով հեզ ուռենու</i>	<i>Ивушка, плачущей горько</i>
<i>Արցունքները բյուրեղի...</i>	<i>Слёзы кудря'ми сопрёт.</i>

(Ալեքսանդրապոլ, 1891 թ.) (թարգմանությունը՝ Ա. Բլոկի)

НОЧЬЮ В САДУ У МЕНЯ

Lento *mf* *p* *mf* *p*

Ночь - ю в са-ду у ме-ня пла - чет пла-ку - ча-я и - ва, и бе-зу-

f *mf* *p* *mf*

теш - на о-на, и - вуш-ка, груст - на-я и - ва. Ран - не-е ут-ро блес-

cresc. *f*

нет, неж-на-я де-вуш-ка зорь-ка и - вуш-ке, пла - чу-щей горь -

ко сле - зы куд - ря - ми сот - рет.

«Վեց ռոմանս» (Օր. 38) վոկալ շարքը Ս. Ռախմանինովը նվիրել է այդ տարիներին մեծ համբավ վայելող երգչուհի Նինա Կոշիցին (Кошиц, 1958: 8): Առաջնախաղը տեղի է ունեցել 1916 թ. հոկտեմբերի 24-ին, որին Մ. Շահինյանը ներկա չգտնվեց. հոգու խորքում նա վիրավորված էր, որ վոկալ շարքը, որի համար նա այդքան սիրով ընտրել էր բանաստեղծական տեքստերը, Ռախմանինովը նվիրել էր ոչ թե իրեն, այլ Ն. Կոշիցին: Երաժշտական քննադատներն այն բարձր գնահատեցին, նշելով, որ ռուսական վոկալ երաժշտության մեջ այդ շարքը մեծ նվաճում էր և Ռախմանինովի ստեղծագործական կյանքի նոր էջ: Իսահակյանական պոեզիայի նկարագրությունը Ռախմանինովի երաժշտական մեկնաբանության մեջ տվել է ականավոր երաժշտագետ և ռուս երաժշտության գերագանց գիտակ Յուրի Կելդիշը. «... գրավիչ իր նուրբ ճաշակով, բանաստեղծական մանրանկարչության սրտառու քնարերգությամբ... Ռախմանինովը պարզապես չի հետևում բանաստեղծական մտքին, այլ հարստացնում է տեքստի պատկերները, տալիս դրանց նոր գույն» (Келдыш, 1973: 421):

Երիտասարդ Իսահակյանի սրտում սիրուց ծնված «ուռենու» տողերը Ա. Բլոկը թարգմանեց շուրջ քառորդ դար անց՝ 1916 թ., երբ Եվրոպայում ու Ռուսաստանում փոթորկում էր Առաջին համաշխարհային պատերազմը: Քաղաքական մթնոլորտը շիկացած էր, և դարաշրջանի հեղափոխական շունչը՝ խիստ «շոշափելի»: Գալիք ողբերգական իրադարձություններն անխուսափելի էին, ինչը հանգեցրեց աշխարհաքաղաքական նոր ցնցումների, պատերազմների և անթիվ մարդկային զոհերի: «Վեց ռոմանս» վոկալ շարքը վերջին ստեղծագործությունն էր, որը Ռախմանինովը գրեց Ռուսաստանում. 1917 թ. նա ընդմիշտ լքեց հայրենիքը...

Ուռենու խորհրդաբանությունը և հնագույն արմատները

Ուռենու (*Ива*, *Salix*) պոետիկ կերպարը բոլոր ժամանակներում գրավել է արվեստագետների ուշադրությունը, ինչը հավանաբար պայմանավորված է ծառի խորհրդաբանությամբ: Հնագույն ազգերի դիցարաններում ուռենին ունեցել է հատուկ նշանակություն՝ երբեմն նույնիսկ հակասական: Հին Արևելքի ժողովուրդների կրոնա-դիցաբանական պատկերացումներում ուռենին ընկալվել է որպես Կենաց ծառ: Այդպես, «Գիլգամեշ, Էնկիդու և Ստորեկրյա Թագավորություն» շումերական էպոսի «Նորափեսայի օրհնություն» հարսանեկան տեքստում, ուռենին հանդես է գալիս որպես սրբազան Կենաց ծառ և հիշատակվում *Հուլուպպու* (*Խսլսքքս*) անունով, որի արմատներում բնակվել է օձը, իսկ ճյուղերի վրա բույն է հյուսել արծիվը (*Кример С.*, 1965: 228): Խեթական ծիսական սրբազան գրերում մեռնող և հարություն առնող աստված Տելեպինուսի առջև հառնում է մշտադալար *eya* ծառը: Խեթերեն «EYA» ձևից է փոխառված ռուսերեն «ива»-ն (*Мифы народов мира*, 1987: 396): Հավանաբար, օսկարակիր «Ավատար» ֆիլմում ուռենու տեսքով կյանքի սրբազան ծառի *էյվա* (*Eywa*) անունն աղերսներ ունի խեթական դիցարանի Էյա-ի անվան հետ. երկուսն էլ հանդես են գալիս որպես Ամենամայր կամ Մեծ Մայր՝ կյանքի բոլոր համակարգերը հավասարակշռող և առաջնորդող ուժ: Էյվան խորհրդանշում էր տիեզերական մտքի իմաստությունն ու հոգևոր էությունը՝ թույլ տալով բոլոր տեսակներին իրենց շրջակա միջավայրում ապրել ներդաշնակության և հավասարակշռության մեջ:

Ուոենու արագ աճելու և «վերականգնվելու» հատկությունն ընկալվել է որպես հավերժական կյանքի խորհրդանշ: Եվրոպական ժողովուրդների դիցաբանության մեջ ուոենին կանացի ուժի, կյանքի, վերածննդի և պտղաբերության մարմնացում էր, ինչը կապված էր հողին և ջրին մատուցվող ծեսերի հետ: Չինական մշակույթում այն խորհրդանշել է կանացի հմայք և գարնան զարթոնք՝ մարմնավորելով Գուանյ-Ինյ գթության աստվածուհուն, իսկ հունա-հռոմեական դիցաբանության մեջ՝ պտղաբերության աստվածուհի Արտեմիսին (Символы знаки, эмблемы, 2005: 197): Հին սկանդինավների պատկերացումներում առաջին մարդիկ եղել են ծառեր՝ «Ask»-ը (Հացենի, Ясень) և «Embla»-ն (Ուոենի, Ива)։ Օդին աստվածը Ասքրից կերտել է տղամարդ, իսկ Էմբլայից կին (Мифы народов мира, 1987, 113):

Հայերեն «*ուոենի*» ձևը ծագում է ***ուո*** արմատից, որը նշանակում է «ճյուղ, ընձյուղ» (Աճառյան Հ., 1971: 607): Ըստ «Ավեստա»-ի, Ուոենին իգական ոգի էր, ում նվիրաբերել են բնության խնամակալ Սպանդարամետին (spenta armayiti՝ «սրտի ազնվություն, սուրբ հոգի»)։ Ուոենին հրեշտակներից միակ կին-հրեշտակուհին էր և Որմզդի դուստրը։ Նրան էր նվիրված մայիսը և ամիսների 5-րդ օրը (Ալիշան Ղ., 1910, 361)։ Ուոենին խորհրդանշել է կանացի նրբագեղություն, կուսություն, հեզություն և ողջախոհություն։ Այդուհանդերձ, համարվել է ամուլ ծառ, քանզի սերմնաթափվել է մինչ հասունանալը։ Ուոենու պաշտամունքի հետքեր գտնում ենք ժողովրդական խաղիկներում։

*Մեր դռանը ուռի ծառ,
Օսկէ կագաւ վրէն թառ,
Էրթար ու գար շորօր փար,
Ալուան ծաղիկ փանել փար* (Իսահակեան, 1898: II-166):

Հայ ավանդական հարսանեկան ծեսի կենտրոնական դրվագներից մեկը նորափեսայի «ծառի» պատրաստման արարողությունն էր։ Պատահական չէ, որ այն կոչվել է «Ուռք» (բարբառային տարբերակները՝ Նուրծ, Նուռք, Ուրց)։ Հայոց տարբեր տարածաշրջաններում «ուռքը» տարբեր կերպ են «շինել»։ Ագուլիսի հայերն ու զոկերը «ուռքը» պատրաստել են ուոենուց. «Մի ուռի ճիւղի վրայ շարում են չամիչ, արմաւ, բակլի, սիսեռի, ընկուզի, զանազան կորիզների շա-

րաններ (մաղաշար)» (Լալայան Ե., 1905: 125): Վասպուրականում, «Խարսըխուրի» [հարս բերող հարսանքավորներ — Մ. Տ.] գնալուց, նորափեսային ու քավորին պարտադիր զարդարել են թարմ ծաղիկներով և ուռենու դալար ճյուղերով (Լալայան Ե., 1910: 154):

Ուռենու պաշտամունքը ժառանգեցին նաև քրիստոնյաները: Այն խորհրդանշում է Ծառզարդարը. կատարվում է Զատիկից մեկ շաբաթ առաջ՝ ի հիշատակ Քրիստոսի «Երուսաղեմ մտնելու օրվա» (մշտադալար ծիթենու ու արմավենու ճյուղերը փոխարինվել են ուռենու շիվերով): Ծաղկազարդին հայոց եկեղեցիները զարդարվում են ուռենու ճյուղերով, կատարվում է ժամերգություն և օրհնված ճյուղերը բաժանվում են ժողովրդին և պահվում մինչև հաջորդ ծաղկազարդ: Ուռենու այդ շիվերին վերագրվում էր բարիքի, առատության, պտղաբերության հմայական գորություն: Հավատացել են, որ դրանցով կավելանա յուղը, կբարձրանա կաթնատվությունը, ձվատվությունը, դրանք դրել են խնոցում, մսուրքում, հավանոցում և այլն: Անդաստանի արարողությամբ ուռենու շիվերով օրհնվում են աշխարհի չորս կողմերը, մասնավորապես, Հայոց հայրապետությունը, հայրենիքը, քաղաքներն ու գյուղերն իրենց բնակիչներով, վանքերը, արտերը և տարվա պտղաբերությունը (Քրիստոնյա Հայաստան, 2002: 450):

Ուռենու «Կենաց ծառի» խորհրդաբանությունը հրեական մշակույթում վերածվեց բաժանման ու վշտի սիմվոլի, ինչն աղերսվում էր հրեա ժողովրդի գերեվարման հետ: Ուռիները հիշատակվում են Դավթի Սաղմոսների գրքի «Իսրայելի ողբը աքսորում» գլխում. «Բաբելոնի գետերի մօտ նստած լալիս էինք, երբ յիշում էինք Սիոնը: Նրանց ուռիներից էինք կախել մեր կտակարանները» (Սաղմ. 136:1-2): Նյունակերպ է մեկնաբանվել ուռենին նաև եվրոպական մշակույթում: Շեքսպիրյան հերոսուհիների ճակատագրերը նույնպես կապվել են ուռենու հետ. խենթացած Օֆելյան իրեն գետն է նետել ուռենուց («Համլետ», 1603), ինչպես նաև Դեզդեմոնան իր մտորումներով երգում կիսվել է «կանաչ ուռենու» հետ («Օթելլո», 1604): Սլավոնական մշակույթում «լացող ուռին» դարձյալ տխրության և սգո խորհրդանիշ է: Այն հաճախ հանդես է գալիս խաչելության տեսարանում, թեև ծառի կտրած ճյուղերը Ծաղկազարդի գլխավոր սիմվոլն են:

Ուռենին առանձնահատուկ դրսևորում է ունեցել ռուսական պոեզիայում: Ծառի պոետիկ կերպարին անդրադարձել են Մ. Լոմոնոսովը («Полидор», 1759) (նվիրել է Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի նախագահ՝ Ռուսաստանի կայսերական բանակի գեներալ-ֆելդմարշալ Կիրիլ Ռազումովսկուն), Վ. Ժուկովսկին («Сельское кладбище», 1839), Ա. Ֆետը («Ивы и берёзы», 1856), Ն. Նեկրասովը («Внимая ужасам войны», 1855; «Мороз, Красный нос», 1863), Ա. Ախմատովան («Память о солнце», 1911; «Ива», 1940), Մ. Յվետաևան («Ахматовой», 1916), Բ. Պաստեռնակը («Весенняя распутица», 1953) և ուրիշները: Ռուսական պոեզիայում ուռենին հաճախ հանդես է գալիս որպես զավակներից բաժանված և որդեկորույս մայրերի վշտի, ինչպես և հայրենի հողից հեռանալու խորհրդանիշ: Ս. Եսենինի պոեզիայում ուռենին ոչ միայն բնապատկերը նկարագրող «տարր» է, այլև քնարական հերոսի ներաշխարհի, նրա տրամադրությունների, ապրումների և կյանքի ու մահվան մասին մտքերի արտացոլումը («Исповедь хулигана», 1920), որն ազգային ճակատագրի ընդհանրացում է (Кур-Кононович, 2017: 99-110): Կարծում ենք, նույն կերպ են մեկնաբանվում նաև իսահակյանական «ուռիները»:

Ավ. Իսահակյան. «Ախ ուռենի, վշտիս ընկեր»

1892 թ. Իսահակյանի համար բացում է «մտորմունքների, մտքերի և վշտերի նոր դռներ». հազարերանգ գույներով շարունակում են փոթորկել սիրո զգացումները, որոնք էլ սկիզբ են դնում «շուշիկյան սիրո երգերին»՝ դառնալով բանաստեղծի քնարերգության հիմքը (Խաչատրյան Ա., 2000: 14): Երկրորդ «ուռենին» («Ախ ուռենի, վշտիս ընկեր») Իսահակյանը գրել է 1892-ին Էջմիածնում: Ընդամենը մեկ տարի է բաժանում այն նախորդ «ուռենուց». Վարպետը կրկին դիմում է իր «վշտի ընկերոջը», որն «անհույս սիրտի սիրտիանք» է, խնդրում «վերան սիրտի դողող սրվեր»: Եվ գուցե սիրելի Շուշիկի հանդեպ զգացմունքն է՛լ ավելի ուժգին է, սակայն այստեղ ուռենին նոր կերպարով է հանդես գալիս՝ որպես «գթոր երկրի հառաչանք».

*Ախ, ուռենի, վշտիս ընկեր, Անամպ երկի'նք, սիրուն գիշեր,
Գթոր երկրի հառաչանք. Լուսնի շողեր ու աստղեր,*

*Սկիզբի վերաս դողդոջ ստվեր
Անհույս սրբիս սփոփանք:*

*Ես տխուր եմ, սփոփեցեք
Մռայլ սիրտս վշտաբեկ:*

(Իսահակյան, 1973: 9)

Սիրո և կարոտի մոտիվները նոր որակով են հնչում նրա քնարերգության մեջ և կարմիր գծով անցնում ամբողջ արվեստում: Իսահակյանի «սերը» կարծես սուրբ երրորդություն է՝ սերը դեպի ԿԻՆԸ, սերը դեպի ՄԱՅՐԸ և սերը դեպի ՀԱՅՐԵՆԻՔԸ, որոնցից յուրաքանչյուրը բանաստեղծի հետագա ստեղծագործական կյանքում դառնում է լուսատու փարոս և ուղեցույց աստղ: Իր երիտասարդ տարիներն արտասահմանում և աքսորում անցկացրած Ավ. Իսահակյանի համար սիրելի մորից հեռու ապրելը մեծ փորձություն էր, ինչի մասին Վարպետը շարունակ գրել է իր նամակներում (Իսահակյան, 1977: 193, 239, 244, 276) և բանաստեղծություններում («Մայրիկ, հիվանդ եմ, սիրտս քրքրված», Բեռլին, 1895; «Մայրիկ, նայի՛ր, արևն ինչպե՛ս», Սարիղամիշ, 1899; «Իմ այրվող վշտից սիրտըս է մաշվել...», Յուրիխ, 1900; «Երազիս տեսա, որ մայրս՝ թշվառ...», Թիֆլիս, 1908; «Կըտեսնեմ ահա, - լուռ երեկոյին...», Կ.Պոլիս, 1911, նն):

Այդ նույն ժամանակամիջոցին Ավ. Իսահակյանի պոեզիա մուտք է գործում նիցշեական փիլիսոփայությամբ ոգեշնչված քնարական հերոսի՝ մարդկության ճակատագրի համար տառապող ու պայքարող բանաստեղծ-Մարգարեի կերպարը («Կենսական ծովի հույզերի միջին», Լայպցիգ, 1894; «Փշե-պսակը ճակտիս կըղնեմ», Վարշավա, 1895), որը կրկին անբաժան է հայրենիքի թեմայից: 1894 թ-ի դեկտեմբերի 6-ի նամակում Ավ. Իսահակյանը գրում է. «Ամբողջ երկիրը — դա իմ բնակարանն է, բայց իմ հայրենիքը — իմ ծնողներիս ոսկորների փոշիացած երկիրը — դա իմ սիրելի ու պաշտելի անկյունն է, ուր ես կարող եմ հանգիստ ու անուշ երազներով քնել — դա իմ սուրբ օջախն է, որի առաջ ես նստում եմ, տաքանում և մտածում» (Իսահակյան, 1977: 113):

Դեռևս պատանեկության տարիներին մեծերից և ավագ ընկերներից լսած հայրենիքի մասին զրույցներն ու խոհերը հետագայում արտացոլում գտան պատմվածքներում. «Քաղցր է հայրենիքը... նվիրական է հայրենի հողը. խորհրդավոր և անբացատրելի հզորություն

ունի: Հայրենիքը հող է, հողն է ստեղծում և կաղապարում ազգություններ, երբ հողը կորսվի, ամեն ինչ կորսված է: Մեր պապերը ծնված են այդ հողից և նորից վերածվել են այդ հողին... այդ հողով է շինված ու զանգված մեր ոսկորը, մեր արյունը, մեր հոգին: Մեր բյուրավոր նախահայրերի հողն է մեր մեջ... ինչքա՞ն դժբախտ է այն մարդը, որ կմեռնի օտար հողում և բախտ չի ունենա խառնվել իր ծնողների հողին...» (Իսահակյան, 1975: 120-121):

Ավ. Իսահակյան. «Գետակի վրա»

1915 թվականը հերթական ողբերգական տարին էր. Օսմանյան կայսրության կազմակերպած հայերի զանգվածային տեղահանությունն ու կոտորածը (Հայոց ցեղասպանության ծրագիրը) հաստատուն քայլերով իրականացվում էին: Եվրոպայում շարունակում էր բոցավառվել Առաջին համաշխարհային պատերազմը, իսկ Ռուսաստանում քաղաքական ներքին հուզումները նոր թափ էին առնում: Աքսորից խուսափելու համար ցարական գաղտնի ոստիկանության կողմից հետապնդվող մտավորականներից շատերը ստիպված էին լքել երկիրը և տարագրվել արտասահման: Դրանց շարքում էր նաև Ավ. Իսահակյանը: Յուրաքանչյուր հայի սրտում վիշտ ու կորուստ էր: Սարսափն ու ողբը պատել էր երկիրը: Վեց տարի դեռ պետք է անցնի, մինչ 1921 թ. մարտի 15-ին Բեռլինի Հարդենբերգ փողոցում կինչի ճակատագրական կրակոցը, որը վերջ կոչի 1915-ի Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկի՝ Թալեաթ Փաշայի կյանքին: Ոստիկն կզնդակահարի Սողոմոն Թեհլերյանը՝ ի կատարումն Հայ հեղափոխական դաշնակցության կազմակերպած «Նեմեսիս» գործողության, որի գործուն մասնակիցը կդառնա նաև Ավ. Իսահակյանը:

Հայաստանից հեռու ապրելով՝ Իսահակյանը չէր դադարում մտածել հայրենիքի մասին: Այդ տարիների ստեղծագործություններում հայրենիքի թեման առանձնահատուկ ողբերգությամբ և անսպառ ցավով է հնչում: 1910-1917 թթ. Ավ. Իսահակյանն աշխատում է «Ուստա Կարո» վեպի վրա, որում փորձ է արվում կերտած կերպարների խտացված գործողություններով դիտարկել և քննել հայ իրականության էությունը: Այն խիստ արդիական է նաև մեր օրերում, քանի

որ հայ ժողովրդի պետականությանն ու անվտանգությանն առնչվող հարցադրումները մինչ օրս մտահոգիչ են:

1915 թ. սեպտեմբերի 25-ին Շվեյցարիայի Ռոզենս (Rossens) գյուղում, Ավ. Իսահակյանը գրում է իր երրորդ՝ վերջին «Ուռենին» («Գետակի վրա թեքվել է ուռին»): Իսահակյանի պես հայրենասեր և հայրենիքի ցավով ապրող մտավորականի համար, ուռենու կերպարին կրկին անդրադառնալը պատահական չէր, քանզի իր վաղեմի «վշտի ընկեր» ուռենու միջոցով նա վերստին արտահայտեց իր սրտի կսկիծն ու մորմոքը, անելանելության մեջ հայտնված հայրենիքի ամբողջ ողբերգությունը: Տարիներ անց, Իսահակյանի այդ բանաստեղծության հիման վրա, կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը գրեց իր հայտնի «Ուռենի» ռոմանսը (1929), որը շատ արագ դարձավ ժողովրդի սիրելի երգերից մեկը: Դ. Ղազարյանն, որը արմատներով շուշեցի էր, մեծ վաստակ ուներ Հայաստանի գյուղերում և քաղաքներում երաժշտական-գեղագիտական դաստիարակության, հայ երգի ու երգչախմբային արվեստի տարածման և զարգացման գործում: Իսահակյանի խոսքերով հայտնի են կոմպոզիտորի «Սար դարդեր», «Քույր իմ, նազելի» երգերը: Դ. Ղազարյանի «Ուռենու» հռչակը Խորհրդային Հայաստանի սահմաններից դուրս էր եկել և հասել Եվրոպա, որի հետ կապված մի ուշագրավ պատմություն է պատմել ինքը՝ Իսահակյանը, երբ ընկերներով հավաքված են եղել Դ. Ղազարյանին շնորհած Արվեստի վաստակավոր գործչի կոչումը (1946) նշելու առիթով: Այդպես, դեռևս տարագրության տարիներին, Փարիզի արևելյան ոճի փոքրիկ ռեստորաններից մեկում, ուր սիրում էր հավաքվել սփյուռքի հայությունը, Ավ. Իսահակյանի ականջին հասնում է մի սրտառույզ երգի եղանակ: Երբ բանաստեղծը հետաքրքրվում է հեղինակով, զարմացած երաժիշտները պատասխանում են, որ խոսքերն իրենն են՝ Իսահակյանինը, իսկ մեղեդին գրել է կոմպոզիտոր Դ. Ղազարյանը: Իսահակյանը շատ հուզված տուն է վերադառնում և գրում երկրորդ եռյակը՝ ընդլայնելով առաջինի թեման:

*Գեղակի վրա...
Երազ աշխարհում*

*Հին տարիների
Անցած-գնացած*

Եվ գլուխը կախ՝
Թեքվել է ուռին
Ամեն բան հավել
Նա լաց է լինում,
Ու նայում է լուռ
Գալիս է, գնում
Ջրերը ուրախ
Վազող ջրերին:
Ու ցնդում անհետ:
Գալիս են, գնում...

Ու լուռ արտասվում,
Նոր հեքիաթներից
Գարուն օրերին
Տխուր հեկեկում,
Պապմում էր ուռին
Մրմունջ էր կարդում
Ջրերը ուրախ
Այն վառ հուշերից:
Ծերացած ուռին:
Գալիս են, գնում:

ՈՒՌԻՆ

Հանդարտ

Գե-տա - կի վը - րա թեք-վել է ու - րին ու նա-յում է լուռ
վա - զող ջը - րե - րին: Ե-րազ աշ-խար - հում ա - մեն բան հա - վետ
գա - լիս է, գը - նում ու ցըն-դում ան - հետ: Եվ գը-լու-խը կախ
նա լաց է լի - նում ջը - րե-րը ու - րախ գա - լիս են գը -
նում, օր - րե-րը ու - րախ գա - լիս են գը - նում:

Ավ. Իսահակյանի և Դանիել Ղազարյանի բարեկամության մասին ուշագրավ հուշեր է պատմել կոմպոզիտորի որդին՝ Լեյնարդ Ղազարյանը. «Նրանք վաղեմի բարեկամներ էին: Հիշում եմ՝ 1958 թ., երբ

նոր էի ընդունվել Ռադիո՝ աշխատանքի, գրական խմբագրությունում աշխատում էր բանաստեղծ Վահան Արամունին: Երբ հնչյունային օպերատորն ինձ ծանոթացրեց՝ ասելով, որ Դանիել Ղազարյանի տղան եմ, նա պատմեց, որ մի առիթով հավաքված են եղել Ավետիք Իսահակյանի տանը..., հանկարծ ռադիոյով հայտարարել են, որ կհաղորդեն Դանիել Ղազարյանի ստեղծագործություններից: Ծրագրում ընդգրկված է եղել նաև «Ուտի» երգը: Իսահակյանը գլուխն առել է փերի մեջ, բոլորը լուռ լսել են: Երբ երգը վերջացել է, նա ասել է. «Միայն Դանիելն է, որ ինձ հասկացել է» (<https://www.facebook.com/689355277789582/photos/>):

Եզրակացություն

Վերլուծելով Ավ. Իսահակյանի ուտենուն նվիրված երեք բանաստեղծությունները («Ամեն գիշեր իմ պարտեզում», «Ախ ուտենի, վշտիս ընկեր», «Գետակի վրա թեքվել է ուռին»), որոնք գրվել են տարբեր տարիներին, տարբեր վայրերում և տարբեր հոգեհուզական տրամադրությամբ, եկել ենք այն եզրահանգման, որ իր բազմապիսի խորհրդապաշտական սիմվոլներով հանդերձ՝ ուտենու պոետիկ կերպարը Վարպետի արվեստում այս կամ այն կերպով նույնացվել է Հայրենիքի հետ: Ինչպես եվրոպական և ռուսական պոեզիայում, այնպես էլ Իսահակյանի քնարերգության մեջ ուտենին խորհրդանշել է վիշտ, կարոտ ու բաժանում, ինչը վկայում է այս ծառի դեռևս անհիշելի ժամանակներից եկած պաշտամունքի և բուսական տոտեմ լինելու փաստը:

Ա. Իսահակյանի «Ուտենի»-ները երաժշտության մեջ

1. **Գալանդերեան Ն.**, «Ամեն գիշեր իմ պարտեզում» Ձայնի համար, առանց նվագակցության (Opus 153, 1930 թ.) // «Յոյսերի և յոյգերի մրմունջներ» . Երգեր և ռոմանսներ / կազմ.՝ Յ. Բեքարեան, Ե., 2000, ԳԱԹ, հատոր Գ, էջ 17-18:

2. **Бархударян С.**, «Над речкой» («Голову ива клонит над речкой» // «Գետակի վրա թեքվել է ուռին»): Для среднего голоса с фортепиано, (перевод М.Ландмана) // «От цветущей розой алой» : Лирические романсы на слова Ав.Исаакяна, Для среднего голоса с

фортепиано. М., «Советский композитор», 1961, с.8-10, текст арм. Русский, посвящ. Заре Долухановой.

3. **Ոսկանյան Ա.**, «*Ամեն գիշեր իմ պարտեզում*», Տենորի երկու դուդուկի և ծնծղայի համար: Վոկալ շարք «Ցավաց սիրտս, երգեր հյուսեց» // Հայկական ռոմանսներ / Կազմեց՝ Հ.Մելիքյան, Ե., «Սովետական գրող», 1984, էջ 138-144:

4. **Զաուշյան Լ.**, «*Գեղրակի վրա*», Ձայնի համար, դաշնամուրի նվագակցությամբ// Հայ կոմպոզիտորների վոկալ-կամերային ստեղծագործություններ, Ե., «Սովետական գրող», 1982, էջ 60-62:

5. **Տերտերյան Ա.**, «*Ամեն գիշեր իմ պարտեզում*»: Ձայնի համար դաշնամուրի նվագակցությամբ // Երգեր և ռոմանսներ, Ե., 1955, էջ 96-97:

6. **Տերտերյան Ա.**, «*Գեղրակի վրա*»: Ձայնի համար // Երգեր և ռոմանսներ, Ե., ԵՊԿ, 2004, էջ 16-18:

7. **Степанян А.**, «*Ива над рекой*», Для голоса с фвртепиано, Перевод А.Гаямова // Степанян А., Песни на стихи А.Исаакяна, Музгиз, 1948, Тетрадь 1, с.3-6.

8. **Տեր-Ղևոնդյան Ա.**, «*Ուռենի*»: Երկու խմբերգ, Թիֆլիս, 1910, Կովկասի Հայոց հրատ. ընկերություն, №19, էջ 3-8:

9. **Ղազարյան Դ.**, «*Ուռի*»: Ձայնի համար, դաշնամուրի նվագակցությամբ /Լվիրում երգչուհի Վարդանուշ Փարվանյանին, М., Издание Ассоциации армянских пролетарских писателей «Горн», Ор.26, 1929, - 4 էջ:

10.**Шнапер Б.**, «*Ивушка*»: Для голоса сопр. Ф-но, М., «Советский композитор», 1973, с. 6-8.

11. **Яхнина Е.**, «*Ночью в саду у меня*»: Для смешанного хора, М., «Советский композитор», 1989.

12. **Соловьёв В.**, «*Печальная ива*» («Стоит над рекой печальная ива»): Для голоса с фортепиано (перевод Т.Спендиаровой) // Старые тополя: Вокальный цикл, Соч. 45, Рукопись, Л., 1978-1980 гг. Первое исполнение состоялось 12 июня 1980 г., в Ленинграде «Дом композиторов, первый исполнитель — Борис Мерешкин, (ф-но Ирина Головнева).

13. **Бойко Р.**, «Стоит над рекой печальная ива» (Посвящение А.И.Хачатуряну): Для баритона, пер. Т.Спендиаровой, М., «Музыка», 1966, с. 2-4.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Ավետիք Իսահակյան**, Հիշատակարան, կազմող՝ Արամ Ինճիկյան, Ե., «Սովետական գրող», 1977, - 471 էջ:
2. **Աթայան Ռ.**, Դիտողություններ «Ավ. Իսահակյանը և հայ երգը» հարցի շուրջ // «Էջմիածին», 1975, №1, էջ 33-36:
3. **Ալիշան Ղ.**, Հին հաւատքը կամ հեթանոսական կրօնք Հայոց, Վենետիկ-Սբ. Ղազար, 1910, -557 էջ:
4. **Աճառյան Հ.**, Հայերեն արմատական բառարան, հ. 1, Երևան, «Համալսարան» հրատ., 1971, -698 էջ:
5. **Թաշճյան Դ.**, Ավետիք Իսահակյանը երաժշտության մեջ /Տեղեկատու/, Խմբ.՝ Ն.Ազարյան, Ե., Ա.Իսահակյանի տուն-թանգարան, 2006, -183 էջ:
6. **Իսահակյան Ավ.**, Երկեր. Բանաստեղծություններ, հ.1, Խմբ.՝ Ա. Ինճիկյան, Ե., 1973, «Հայաստան», - 335 էջ :
7. **Իսահակյան Ավ.**, Երկերի ժողովածու, Պատմվածքներ, հ. 4, Խմբ.՝ Ա. Ինճիկյան, Ե., 1975, «Հայաստան» հրատ., - 479 էջ:
8. **Իսահակեան Մ.**, Շիրակի ժողովրդական երգեր // Ազգագրական հանդես, գ. IV, Թիֆլիս, 1898, N 2 (էջ 161-176), - 420 էջ:
9. **Լալայեան Ե.**, Նախիջեանի գաւառ, Գողթն //Ազգագրական հանդես, գ. XII, Թիֆլիս, 1905 (էջ 109-174), -340 էջ:
10. **Լալայեան Ե.**, Վասպուրականի ազգագրութիւնը // Ազգագրական հանդես, գ. XX, Թիֆլիս, 1910 (էջ 116-196), -215 էջ:
11. **Խաչատրյան Ա.**, Ավետիք Իսահակյանի պոեզիան, Գրահրատարակիչների ազգային միություն, Ե., 2000, - 410 էջ:
12. **Ղազարյան Դ.**, «Ուղին»: Ձայնի համար, դաշնամուրի նվագակցությամբ (Նվիրում երգչուհի Վարդանուշ Փարվանյանին), Մ., Издание Ассоциации армянских пролетарских писателей «Горн», 1929, - 4 էջ:
13. «Մուրճ», 1902, №1, էջ 49:
14. Քրիստոնյա Հայաստան, հանրագիտարան, Գլխ. Խմբ.՝ Հ.Այվազյան, Ե., «Հայկական Հանրագիտարան» հրատ., 2002, -1072 էջ:
15. **Апетын З.**, Воспоминания о С. Рахманинове (в 2-х томах), т. 2. М., 1961, «ГосМузИздат», - 570 с.

16. **Апетян З.**, С. Рахманинов. Литературное наследие: воспоминания, статьи, интервью, письма (в 3-х томах), т. 1. М., 1978, изд. «Советский композитор», - 647 с.
17. **Келдыш Ю.** Рахманинов и его время, М., 1973, Институт истории культур министерства СССР, изд. «Музыка», - 508 с.
18. **Кошиц Н.** Рахманинов в моей жизни и в музыке: Из готовящейся к печати книги // «Новое русское слово», Нью-Йорк, 1958, 29 июня (№ 16437), с. 2, 8.
19. **Крамер Сэмюэл Н.** История начинается в Шумере, Ред. и предисловие академика В. Струве, Перевод Ф.Мендельсона, М., изд. «Наука», 1965, - 256 с.
20. **Кур-Кононович И.**, Роль ивы в поэзии С.А. Есенина // Acta Universitatis Lodzensis Folia Linguistica Rossica 14, 2017, с. 99-110.
21. **Мирза-Авакян М.**, Работа А. Блока над переводами стихов Исаакяна // «Историко-филологический журнал». Е., 1960, № 4.
22. Мифы народов мира. Энциклопедия, т. 1 (А-И), Ред. М., изд. «Советская Энциклопедия», 1987, -671 с.
23. **Мкртчян Л.**, Аветик Исаакян и русская литература, Е., «Армгосиздат», 1963,-242 с.
24. Символы, знаки, эмблемы. Энциклопедия, М., изд. «Локид-Пресс», 2005, -495 с.
25. «Поэзия Армении с древнейших времен до наших дней», В переводе русских поэтов; под редакцией со вступительным очерком Валерия Брюсова. М., изд. Московского Армянского комитета, 1916, - 523 с.
26. **Оганян З.**, Александр Блок как переводчик поэзии Исаакяна // Историко-филологический журнал. Е., 1973, № 4.

REFERENCES

1. **Avetiq Isahakyan**, Hishatakanan, kazmogh` Aram Intwikyan, E., «Sovetakan grogh»,1977, - 471 e'j:
2. **At'ayan R'.**, Ditoghowt'yownner «Av.Isahakyany' & hay ergy'» harci showrj // «E'jmiac'in», 1975, №1, e'j 33-36:
3. **Alishan Gh.**, Hin hawatqy' kam het'anosakan kro'nq Hayoc, Venetik-Sb. Ghazar, 1910, -557 e'j:
4. **Atwar'yan H.**, Hayeren armatakan bar'aran, h. 1, Er&an, «Hamalsaran» hrat., 1971, -698 e'j:

5. **T'ashtwyan D.**, Avetiq Isahakyany' erajhshtowt'yan mej /Teghekatow/, Xmb.` N.Azaryan, E., A.Isahakyani town-t'angaran, 2006, -183 e'j:
6. **Isahakyan A.**, Erker. Banasteghc'owt'yownner, h.1, Xmb.` A. Intwikyan, E., 1973, «Hayastan», - 335 e'j :
7. **Isahakyan A.**, Erkeri jhoghovac'ow, Patmvac'qner, h. 4, Xmb.` A. Intwikyan, E., 1975, «Hayastan» hrat., - 479 e'j:
8. **Isahakean M.**, Shiraki jhoghovrdakan erger // Azgagrakan hande's, g. IV, T'iflis, 1898, N 2 (e'j 161-176), - 420 e'j:
9. **Lalayeian E.**, Naxijewani gawar', Goght'n //Azgagrakan hande's, g. XII, T'iflis, 1905 (e'j 109-174), -340 e'j:
10. **Lalayeian E.**, Vaspowrakani azgagrowth'wny' // Azgagrakan hande's, g. XX, T'iflis, 1910 (e'j 116-196), -215 e'j:
11. **Xachatryan A.**, Avetiq Isahakyani poezian, Grahatarakichneri azgayin miowt'yown, E., 2000, - 410 e'j:
12. **Ghazaryan D.**, «Owr'in»: D'ayni hamar, dashnamowri nvagacowt'yamb (Nvirowm ergchowhi Vardanowsh P'arvanyanin), M., Издание Ассоциации армянских пролетарских писателей «Горн», 1929, - 4 e'j:
13. «Mowrtw», 1902, №1, e'j 49:
14. Qristonya Hayastan, hanragitaran, Glx. Xmb.` H.Ayvazyan, E., «Haykakan Hanragitaran» hrat., 2002, -1072 e'j:Apetjan Z., Vospominanija o S. Rahmaninove (v 2-h tomah), t. 2. M., 1961, «GosMuzlzdats», - 570 s.
15. **Apetjan Z.**, Vospominanija o S. Rahmaninove (v 2-h tomah), t. 2. M., 1961, «GosMuzlzdats», - 570 s.
16. **Apetjan Z.**, S. Rahmaninov. Literaturnoe nasledie: vospominanija, stat'i, interv'ju, pis'ma (v 3-h tomah), t. 1. M., 1978, izd. «Sovetskij kompozitor», - 647 s.
17. **Keldysh Ju.** Rahmaninov i ego vremja, M., 1973, Institut istorii kul'tur ministerstva SSSR, izd. «Muzyka», - 508 s.

18. **Koshic N.** Rahmaninov v moej zhizni i v muzyke: Iz gotovjashhejsja k pečati knigi // «Novoe russkoe slovo», N'ju-Jork, 1958, 29 ijunja (№ 16437), s. 2, 8.
19. **Kramer Sjemjujel N.** Istorija nachinaetsja v Shumere, Red. i predislavie akademika V. Struve, Perevod F.Mendel'sona, M., izd. «Nauka», 1965, - 256 s.
20. **Kur-Kononovich I.,** Rol' ivy v poezii S.A. Esenina // Acta Universitatis Lodziensis Folia Linguistica Rossica 14, 2017, s. 99-110.
21. **Mirza-Avakjan M.,** Rabota A. Bloka nad perevodami stihov Isaakjana // «Istoriko-filologičeskij zhurnal». E., 1960, № 4.
22. Mify narodov mira. Jenciklopedija, t. 1 (A-I), Red. M., izd. «Sovetskaja Jenciklopedija», 1987, -671 s.
23. **Mkrtchjan L.,** Avetik Isaakjan i russkaja literatura, E., «Armgosizdat», 1963,-242 s.
24. Simvoly, znaki, jemblemy. Jenciklopedija, M., izd. «Lokid-Press», 2005, 495 s.
25. «Poezija Armenii s drevnejshih vremen do nashih dnejj», V perevode russkih pojetov; pod redakciej so vstupitel'nyj ocherkom Valerija Brjusova. M., izd. Moskovskogo Armjanskogo komiteta, 1916, - 523 s.
26. **Oganjan 3.,** Aleksandr Blok kak perevodchik poezii Isaakjana // Istoriko-filologičeskij zhurnal. E., 1973, № 4.